

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԲՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Ը. Տարի, Թիւ 333, Ուրբաթ, 13 ՄԱՅԻՍ, 2016

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԱՆԴՊՈՒՄ

Շաբաթ, 7 Մայիս 2016 ին, տեղի ունեցաւ Քուէյթի հոգւեր առաջնորդներու հանդիպում մը, որուն մասնակից էր Թեմիս բարեջան առաջնորդ՝ Գերպ. Մասիս Ծ. Վրդ. Զօպույեան, Յոյն Ուղղափառ եկեղեցոյ Առաջնորդ՝ Ղաթթաս Եպս. Հազիմ, Ղպտի Ուղղափառ եկեղեցոյ առաջնորդական փոխանորդ՝ Պիկոլ Անպա Պիշոյ, Աւետարանական եկեղեցոյ պետ՝ Վերապատուելի Էմանուէլ Ղարիպ, Յոյն Կաթողիկէ Պատրիարքական փոխանորդ՝ Պուրթոս Ծ. Վրդ. Ղարիպ, Մարոնիթ եկեղեցոյ Պատրիարքական փոխանորդ՝ Ռիմոն Վրդ. Իիտ, Յոյն Ուղղափառ եկեղեցիէն՝ Աֆրամ Ծ. Վրդ. Թուրմէ եւ Քուէյթի Հայ եկեղեցոյ հոգւեր հովիւ՝ Արտակ Քինյ. Քէհեաեան:

Հանդիպման ընթացքին հոգւեր առաջնորդները արծարծեցին եկեղեցիները մտահոգող հարցերու եւ միասնաբար այդ աշխատանքները դիմակալելու մասին: Ապա Յոյն Ուղղափառ եկեղեցին, սիրոյ հաւաքական ճաշով, հիւրասիրեց հոգւեր հայրերը, որոնք ունեցան նաեւ յիշատակի նկարներ:



ՀԱՅԿԱԿԱՆ

«Ես Կարոն եմ» Կարգախօսով Երթ՝ Դեպի ՄԱԿ-ի Երևանեան Գրասենեակ

11 Մայիսին Երևանի Հանրապետության հրապարակին վրայ գտնուող «Հայփոստ»-ի բաժանմունքին դիմացին ընթացք առաւ «Ես Կարոն եմ» խորագրեալ երթ՝ դեպի ՄԱԿ-ի երևանեան գրասենեակ՝ ի պաշտպանութեան թրքական խորհրդարանի հայ երեսփոխան Կարօ Փայլանի: Երթին մասնակիցները բարձրացուցած են պաստառներ՝ «Ես Կարօ Փայլանն եմ», «Իւրաքանչիւր հայ սիրում եւ աջակցում է քեզ, Կարօ», «Stop fascism» գրութիւններով:



Երթին կազմակերպիչներէն Մարք Յովհաննիսեան նշեց, որ իրենց հիմնական նպատակն է բարձրաձայնել, չլռել, որովհետեւ յաճախ նման պարագաներու բռնորդ կը լռեն: «Միջազգային կազմակերպութիւններէն մեծ ակնկալութիւններ չունինք: Ծայրայեղական թուրքերուն կողմէ հնչած են յայտարարութիւններ, թէ Կարոն պէտք է ենթարկել Տինքի ճակատագիրին, բայց մենք պէտք չէ թողատրենք, որ ատիկա տեղի ունենայ: Մենք հարիւր տարի առաջունան հայերը չենք, փոխուած ենք: Մենք անձամբ պէտք է լուծենք մեր հարցերը», ըսաւ ան:

Մարք Յովհաննիսեան դիտել տուած է, որ քայլարշաւ-ցոյցը կազմակերպուած է հայրենասիրական մղումներով, ինչպէս նաեւ Կարօ Փայլանի նկատմամբ հոգատարութիւն ցուցաբերելու միտումով: «Նաեւ պատուի հարց է. Կարոն մեր շահերը կը պաշտպանէ հոն, մենք ալ հոս պէտք է թիկունք կանգնինք անոր, ան պէտք է զգայ, որ իր հայրենակիցները իրեն հետ են ու մինչեւ վերջ պիտի շարունակեն ըլլալ: Մեծ բան է, որ ան կրնայ Թուրքիոյ նման երկրի մը մէջ բարձրաձայնել Հայոց ցեղասպանութեան, հայերու իրաւունքներուն ու համամարդկային արժէքներուն մասին», շեշտած է ան: Մ. Յովհաննիսեան տեղեկացուցած է, որ ՄԱԿ-ին ուղղուած նամակին մէջ ներկայացուցած են իրենց պահանջը միջազգային կազմակերպութեան՝ հետամուտ ըլլալ ու ստիպել Թուրքիոյ իշխանութիւնները Կարօ Փայլանի կեանքին անվտանգութիւնը ապահովելու, քանի որ արդէն ակնյայտ սպառնալիքներ կը հնչեն անոր հասցէին: «Կ'ուզեն զայն արժանացնել Հրանդ Տինքի ճակատագիրին, մենք պէտք է ձայն բարձրացնենք, որ ամբողջ աշխարհը գիտնայ, թէ ի՛նչ կը կատարուի Թուրքիոյ մէջ», հաստատած է կազմակերպիչը՝ աւելցնելով, որ ՄԱԿ-ը պէտք է հաւատարիմ մնայ իր առաքելութեան:



Մասնակիցները ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակին պէտք է յանձնէին նամակ մը, որուն մէջ կոչ կ'ուղղէին երաշխաւորելու Կարօ Փայլանի ապահովութիւնը եւ տարբեր երկիրներու ներկայացուցիչներէ կազմուած յանձնախումբով զբաղելու դէպքին հետաքննութեամբ:

Մակայն ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակին մէջ երթի մասնակիցները «ընդունեցին» միայն ապահովական աշխատակիցները: Արդարեւ, սկիզբէն երթի կազմակերպիչներուն մօտեցաւ ապահովութեան աշխատակիցներէն մէկը եւ ըսաւ, որ նամակը կրնան իրեն յանձնել: Բայց եւ այնպէս կազմակերպիչները նշեցին, որ իրենք նամակը պիտի յանձնեն միայն հասարակութեան հետ կապերու բաժանմունքի աշխատակիցներուն կամ ՄԱԿ-ի գրասենեակի ռեւէ պատասխանատուի: Երկրորդ անգամ նամակը ստանալու համար մօտեցաւ գրասենեակի ապահովութեան պետը, եւ կազմակերպիչները, թիրիմացաբար, նամակը յանձնեցին անոր: Անդրադառնալով տեղի ունեցածին, երթին նախաձեռնողները պահանջեցին, որ իրենց մօտենայ ՄԱԿ-ի աշխատակիցներէն մէկը եւ բացատրէ, թէ ինչո՞ւ միայն ապահովականի պատասխանատուները կապ կը հաստատեն իրենց հետ: Մինչ այդ, կազմակերպիչներէն Հայկանուշ Ալոյեանին հեռաձայնեց գրասենեակի անվտանգութեան մէկ այլ աշխատակից՝ ըսելով, որ անհանգստանալու կարիք չկայ, նամակը արդէն փոխանցուած է քարտուղարութեան գրասենեակ: Ան նաեւ խոստացաւ ապագային գրաւոր պատասխան տալ նամակին:

«Այնպէս եղաւ, որ ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակին մէջ կ'աշխատին միայն ապահովութեան հսկողները, քանի որ ոչ ոք չբարեհաճեցաւ գոնէ գալ ու մեր պահանջը լսել: Նման անյարգալից վերաբերմունքին համար մենք պիտի դիմենք ՄԱԿ-ի կեդրոնական գրասենեակ», ըսաւ Ալոյեան:

Ռուստամեան. «Արցախի Անկախութեան Ճանաչման Հարցը Պէտք է Մնայուն Կերպով Հայաստանի Օրակարգին Վրայ Մնայ»

ՀՅԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ, Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեան 11 Մայիսին Ազգային ժողովին մէջ լրագրողներուն հետ ունեցած զրոյցին ընթացքին յայտարարած է, որ Հայաստանի կողմէ Արցախի անկախութեան ճանաչումը պէտք է տեղի ունենայ ճիշդ ժամանակին:

Ան ընդգծած է, որ եթէ Հայաստանի եւ Արցախի իշխանութիւնները քննարկումներու լոյսին տակ որոշած են, որ ներկայիս ճիշդ ժամանակը չէ ատիկա ընելու, ուրեմն իսկապէս ատոր ժամանակը չէ: Միեւնոյն ժամանակ, Ռուստամեան այն կարծիքին է, որ Արցախի ճանաչման հարցը պէտք է միշտ Հայաստանի օրակարգին վրայ ըլլայ: «Հայաստան չէ ճանչցած Լեռնային Ղարաբաղը, որպէսզի ատիկա տեղի ունենայ միջազգային հոլովոյթի միջոցով: Մենք կ'ուզենք ոչ թէ միակողմանի կերպով ճանչնալ, այլ Մինսքի խմբակի ծիրին մէջ իրականացնել այդ հոլովոյթը: Ասիկա Հայաստանի կողմէ մեծագոյն զիջումն է, որպէսզի բանակցութիւններու միջոցով բոլորը համոզուին, որ Ղարաբաղի անկախութիւնը պէտք է ճանչցուի: Բայց եթէ Ազրպէյճան բանակցութիւնները տանի փակուողի, դադրեցնէ բանակցութիւնը, Հայաստան Ղարաբաղի ճանչնալէ բացի այլընտրանք չ'ունենար: Այս մասին շատ յստակ յայտարարած է հանրապետութեան նախագահը: Այս պատճառով ալ մենք միշտ կ'ըսենք, որ Արցախի ճանաչումը պէտք է միշտ մնայ մեր օրակարգին վրայ, սակայն միաժամանակ պէտք է կնքուի ռազմական փոխօգնութեան պայմանագիրը, որ կը նշանակէ՝ յարձակումը Ղարաբաղի վրայ, կը նշանակէ յարձակում Հայաստանի վրայ: Իսկ եթէ ատիկա յարձակում է Հայաստանի վրայ, ուրեմն Հայաստան իր բոլոր միջոցներով պէտք է պաշտպանուի», նշած է Ռուստամեան:

Ան աւելցուցած է, որ Հայաստանը երբեք միջազգային հանրութեան համար սպառնալիք չէ հանդիսացած: «Մեր կողմէ երբեք պատերազմ չէ սկսած, մեզի պատերազմ պարտադրած են: Եւ այսօր, երբ կը խօսին այն մասին, որ Հայաստանը սպառնալիք է, թող նախ եւ առաջ տեսնեն, թէ ո՞վ է իրական սպառնալիքը: Ասիկա թուրք-ազրպէյճանական լծակ է: Թող խօսին այն մասին, թէ ինչո՞ւ թրքական զօրք կը կուտակեն Նախիջեւանի մէջ: Անոնք պայթիւնավտանգ իրավիճակ կը ստեղծեն, ապա կը մեղադրեն ուրիշը, որ միայն կ'ուզէ պաշտպանուիլ», նշած է պատգամաւորը:

Անդրադառնալով Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպանութեան երկրորդ քարտուղարին այն յայտարարութեան, թէ ռուսական զենքը կարելի չէ Արցախ տանիլ, այնքան ատեն որ Հայաստան չէ ճանչնաւ Արցախի անկախութիւնը, Ռուստամեան ըսած է. «Վատ չէ, եթէ կ'ըսեն՝ ճանչցէք, ու կարելի է ուղարկել զենքը, բայց մենք նաեւ կը խօսինք այն մասին, որ այսօր Հայաստան շատ յստակ յայտարարած է, որ կը պատրաստուի Արցախի հետ ռազմական փոխօգնութեան համաձայնագիր կնքել, իսկ այդ պայմանագիրը իրերը պէտք է կոչէ իրենց անունով: Տէ ֆաքթօ ստեղծուած իրավիճակը մենք պէտք է տէ ժիւրէ ամրագրենք: Որո՞ւ համար գաղտնիք է, որ Հայաստան կը հանդիսանայ Արցախի անվտանգութեան երաշխաւորը, իսկ Հայաստան ատոր համապատասխան քայլերու պէտք է ձեռնարկէ: Այդ պատճառով ալ պէտք է չէզոքացնել այն ռազմական սպառնալիքը, զոր Ազրպէյճան կը ներկայացնէ Արցախի ժողովուրդին համար: Այդ պատճառով ալ կը կարծեն, թէ այդ պայմանագիրը պէտք է արագացուի, որպէսզի նման հարցեր չյառաջանան: Այսինքն, Հայաստանի ունեցած զինանոցը պէտք է ծառայէ Ղարաբաղի անվտանգութեան», հաստատած է Արմէն Ռուստամեան:

Խօսելով քառօրեայ պատերազմին ընթացքին Ռուսիոյ որդեգրած դիրքորոշման մասին՝ Ռուստամեան նկատել տուած է, որ Ռուսիա Հայաստանին աջակցած է այնքանով, որքանով այդ պահուն անհրաժեշտ էր: «Մենք մեր ռազմավարական գործընկերներէն դժգոհ չենք: Չեմ կարծեր, թէ ամէն բան պէտք է այդքան ծայրայեղ կերպով դիտել: Կը կարծենք, որ այս պահուն Ռուսիան ուղղակի պէտք է հետեւի, որպէսզի հաւասարակշռութիւնը չխախտի: Այսօր Ազրպէյճան Ռուսիայէն բացի քանի մը այլ երկիրներէ ալ զենք կը գնէ: Հայաստան միայն Ռուսիոյ հետ կը լուծէ այդ հարցերը: Հիմա, երբ Ռուսիան կ'որոշէ զենք վաճառել Ազրպէյճանին, պէտք է տեսնէ՝ հաւասարակշռութիւնը կը խախտի՞ այդպէս, թէ՞ ոչ, իսկ Ռուսիան նաեւ դարաբաղեան տագնապի լուծման միջնորդ կողմ կը հանդիսանայ», ընդգծած է Արմէն Ռուստամեան:

Բակո Սահակեան Եւ Ռոպերթ Քոչարեան Քննարկած Եւ Ազրպէյճանի Գործողութիւններուն Հետեւանքները

11 Մայիսին տեղի ունեցած է Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի եւ Հայաստանի նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանի հանդիպումը, որուն ընթացքին քննարկուած են դարաբաղեան-ազրպէյճանական սահմանին վրայ 2-5 Ապրիլին հակառակորդին կողմէ սանձազերծուած լայնածաւալ պատերազմական գործողութիւններուն եւ անոնց հետեւանքներուն վերաբերող հարցեր:

Արցախի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութենէն յայտնած են, որ նախագահ Սահակեան ընդգծած է, որ մեր յաղթանակները խարսխուած են Հայաստան-Արցախ-սփիւռք եռամիասնութեան վրայ՝ կարելոր նկատելով քաղաքական ուժերուն կողմէ ցուցաբերուած միասնականութիւնը եւ գործուն քայլերը՝ Արցախին սատարելու գծով:

Հայ Ղատի Յանձնախումբերը Նոր Թափով Պիտի Յաղթահարեն Արցախի – Հայաստանի Ու Հայության Դիմագրաւած Մարտահրաւերները

8-11 Մայիսին Երեւանի եւ Ստեփանակերտի մէջ գումարուեցաւ ՀՅԴ Հայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու համաժողովը:

Խորհրդաժողովին մասնակցեցան Հայ դատի աւելի քան 25 յանձնախումբերէն եւ գրասենեակներէն, եւ ՀՅԴ կուսակցական մարմիններէն մօտ 65 ներկայացուցիչներ:

Խորհրդաժողովի օրակարգին հիմնական կէտերն էին.

. Արցախի իրաւական միջազգային ճանաչումին համար եւ Ազրպէյճանի հակահայ քաղաքականութեան դէմ պայքար.

. Աշխատանքներ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումին եւ պահանջատիրական պայքարին ուղղութեամբ.

. Հայաստանի արտաքին քաղաքականութիւն եւ մարտահրաւերներ.

. Ջաւախքի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան ուղղութեամբ նախաձեռնութիւններ:

Խորհրդաժողովը քննարկեց Հայ դատի աշխատանքներու ընթացքը 2015-ի յունուարէն առ այսօր:


Հայ դատի աշխարհասփիւռ գրասենեակներն ու յանձնախումբերը՝ աւարտելով իրենց գումարած քառօրեայ խորհրդաժողովը, կը յայտարարեն.

– Իրենց ամբողջական ու անվերապահ աջակցութիւնը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ու ժողովուրդին՝ ընդգծելով, որ յաւելեալ վճռակամութեամբ պիտի շարունակեն Արցախի անկախութեան միջազգային ճանաչման, բարգաւաճման ու անվտանգութեան ապահովման ուղղուած իրենց ջանքերը:

– Կը դատապարտեն Ազրպէյճանի կողմէ Մայիս 1994-ի զինադադարի եռակողմ համաձայնութեան շարունակական խախտումներն ու Ապրիլի 2-ին շղթայազերծած յարձակումը եւ անընդունելի նկատելով անոնց առնչութեամբ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն ու ընդհանրապէս միջազգային ընտանիքին՝ նախադարձակն ու անոր զոհը նոյն նժարին վրայ դնող յայտարարութիւնները՝ կը պահանջեն որդեգրումը յստակ ու արդար գնահատանքի, ինչ որ կրնայ միայն նպաստել դարաբաղեան հիմնախնդիրի խաղաղ կարգաւորման:

– Կը վերանորոգեն Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման, փոխհատուցման ու հայ ժողովուրդի պահանջատիրութեան նկատմամբ իրենց յանձնառութիւնը:

– Իրենց աջակցութիւնը կը յայտնեն Հայաստանի Հանրապետութեան բարգաւաճման, անվտանգութեան ապահովման ու միջազգային հեղինակութեան զարգացման ջանքերուն:



– Իրենց զօրակցությունը կը յայտնեն Ջալալաբադի հայությունն՝ իր քաղաքական, կրթական-մշակութային եւ հոգեւոր իրաւունքներու պաշտպանութեան եւ ընկերային-տնտեսական վիճակի բարելաման ուղղութեամբ քայլերուն:

– Առաւել թափով պիտի շարունակեն քաղաքական յարաբերութիւններու ճամբով անվտանգութեան եւ իրաւունքներու պաշտպանութեան, ինչպէս նաեւ՝ Սուրիոյ եւ Հայաստանի մէջ գտնուող սուրիահայութեան մարդասիրական միջազգային աջակցութիւն ապահովելու նպատակով աշխատանքները:

**ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆՆԱԿՆԵՐ ԵՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ
ՀՅՂ ՄԱՍԼՈՑ ԴԻԻԱՆ**

Ստեփանակերտ, 11 Մայիս 2016

Եւրոպական Հեռարձակողներու Միութիւնը Զգուշացուցած է Հայաստանը՝ Արցախի Դրօշը Ծածանելուն Համար

Եւրոպական հեռարձակողներու միութիւնը պաշտօնապէս նախազգուշացուցած է Հայաստանի հանրային հեռարձակողը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դրօշը հայաստանեան պատուիրակ Իվետա Մուկուչեանի կողմէ ծածանելուն համար:

Այս մասին գրած է eurovoix.com կայքը: Եւրոպական հեռարձակողներու միութիւնը նշած է, որ եթէ Լեռնային Ղարաբաղի դրօշը կրկին ծածանի մրցումին ընթացքին, հայաստանեան պատուիրակութիւնը ինքզինք պիտի դնէ այս եւ հետագայ տարիներու մրցումներէ որակազրկուելու վտանգին դէմ յանդիման: Հայաստանի նկատմամբ պատիժ պիտի սահմանուի մինչեւ Յունիս՝ դրօշը պարզելուն համար:

Ռոպերթ Քոչարեան Այցելած է Սահմանագիծ



Հայաստանի նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանի եւ Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանի միջեւ տեղի ունեցած հանդիպումին զուգահեռ, նախկին նախագահը նաեւ այցելած է սահմանագիծ եւ հանդիպում ունեցած է Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի հրամանատարական կազմին հետ:

Լեռնային Ղարաբաղի նախագահի մամլոյ բանբեր Դաւիթ Բաբայեան նաեւ յայտնած է, թէ նախագահ Սահակեանի եւ Հայաստանի նախկին նախագահին միջեւ մնայուն հեռաձայնային կապ կայ:

«Ընդհանրապէս Լեռնային Ղարաբաղի նախագահը կապեր ունեցած է գրեթէ բոլոր քաղաքական ուժերու առաջնորդներուն, քաղաքական գործիչներուն, հասարակական գործիչներուն հետ: Ռոպերթ Քոչարեանի առնչութեամբ եւս յատուկ ենթագիր չկայ: Կատարուած է միտքերու փոխանակում», նշած է Բաբայեան:

WWW.AZTARAR.COM

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Ահաւոր Պայթում՝ Պաղտատի Բազմամարդ Շուկաներէն Մէկուն Մէջ



Ահաւոր պայթում մը Չորեքշաբթի օր կէսօրէ առաջ ցնցեց Պաղտատի արեւելքը գտնուող Մատր շրջանի բազմամարդ մէկ շուկան: Սկզբնական տեղեկութեանց համաձայն, պայթումը պատճառած է 64 զոհ եւ 87 վիրաւորներ: ՏԱՀԵՇ-ը համացանցի վրայ ստանձնեց մեծամասնութեամբ շիիներով բնակուած այս շրջանի պայթումը՝ բացայայտելով զայն գործադրած ահաբեկիչին՝ Ապու Մուլէյման Անսարիի անունը, զայն որակելով «նահատակ»:

Նմանապէս, Չորեքշաբթի օր յետմիջօրէին երկու այլ պայթումներ եւս պատահեցան, մէկը Պաղտատի հիւսիսը գտնուող Քազըմիէ քաղաքի մուտքին, մեծամասնութեամբ շիիներով բնակուած Ատան հրապարակին վրայ, երկրորդը՝ Պաղտատի արեւմուտքը Ժամիհա թաղամասի Ռապիհ փողոցին մէջ, մեծամասնութեամբ սիւննի բնակչութեամբ: Առաւելաբար դաշնակցային ռստիկանութեան անցարգելներ թիրախ ունեցող այդ երկու պայթումները, նախնական տեղեկութիւններու համաձայն, պատճառեցին 18 զոհ եւ 42 վիրաւոր:

Ցարդ ոչ ոք ստանձնեց վերջին երկու պայթումներուն պատասխանատուութիւնը:

Նշենք, որ առաջին պայթումէն ճողոպրած մարդիկ իրենց ցասումը արտայայտեցին, մեղադրելով կառավարութիւնը իբրեւ իրենց պաշտպանութեան մէջ թերացող իշխանութիւն:

Այս պայթումները կը պատահին այնպիսի պահու, երբ Իրաքի մէջ քաղաքական սաստիկ տագնապ կայ, երեսփոխանները չեն կրնար համաձայնիլ լիազումար նիստ գումարելու առումով եւ կառավարութիւնը կը պարզէ գրեթէ կազմալոյծ վիճակ՝ հատուածական եւ կուսակցական տարակարծութեանց հետեւանքով:

Նշենք, որ ՏԱՀԵՇ-ի կատարած պայթումները առաւելաբար թիրախ ունին Իրաքի շիիներով բնակուած շրջանները: Չորեքշաբթի օրուան պայթումը մեծագոյնն ու ամենէն ահաւորն էր ամիսներէ ի վեր յաճախակիօրէն կատարուող պայթումներուն շարքին:

Ահաբեկչութեան Դեմ Պայքարին Գծով. Էրտողան. «Ոչ Մէկ Պետութիւն Թուրքիոյ Չափ Ճիգ Թափեց»



«Թուրքիա երեք հազար ահաբեկիչ սպաննեց Մուրիոյ եւ Իրաքի հետ իր սահմաններու տարածքին կռուող այսպէս կոչուած ՏԱՀԵՇ-ի անդամներէն», յայտարարեց Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան Չորեքշաբթի օր զինուորական բարձրաստիճան հրամանատարներու հետ ժողովի մը ընթացքին: Ան «արհամարհելի» որակեց այն

տեղեկությունները, ըստ որոնց, Թուրքիա կը զօրակցի ՏԱՀԵՇ-ի: «Ոչ մէկ երկիր Թուրքիոյ նման եւ անոր չափ ճիգ չտարաւ այս գծով» ընդգծեց Էրտողան: Նշենք, որ նոյն հարցին առնչութեամբ իր արտասանած խօսքին մէջ Թուրքիոյ սպայակոյտի պետը յայտարարեց, թէ Իրաքի եւ Սուրիոյ հետ Թուրքիոյ սահմանային գօտիին վրայ սպաննուածներու թիւը հասած է 1300-ի:

Բրիտանական «Պի.Պի.Սի.» կայանը, որ կը հաղորդէ լուրը, ակնցուց, թէ այս հարցին անդրադարձող թղթակիցը չէ կրցած Էրտողանի օգնականներէն ստուգել նշեալ երկու թիւերու միջեւ տարբերութիւնը: Միւս կողմէ, Թուրքիա յաւելեալ օժանդակութիւն պահանջեց Արեւմուտքի երկիրներէն՝ «կարենալ դիմադրելու համար ահաբեկչական խմբաւորումներուն»:

Բանավէճ՝ Թուրքիոյ Եւ Եւրոպական Միութեան Միջեւ

Այս օրերուն լուր բանավէճ մը ծայր առած է Թուրքիոյ եւ Եւրոպական Միութեան միջեւ՝ ահաբեկչութեան եւ սուրիացի գաղթականներու հարցերուն առնչութեամբ:

Արդարեւ, անցնող օրերուն Եւրոպական Միութիւնը իր անդամ երկիրներուն թելադրած էր սկզբունքով արտօնել թուրքերու առանց այցեգիրի Եւրոպա մուտքը՝ փոխադարձաբար Թուրքիայէն պահանջելով ընդառաջել բարեկարգումի կարօտ 72 կէտերու սրբագրութիւնը, որոնց կարգին՝ ահաբեկչութեան դիմակալման գծով Թուրքիոյ որդեգրած բիրտ քաղաքականութիւնը:

Եւրոպական Միութիւնը նախանցեալ օր առկախեց այս գծով Թուրքիոյ հետ նախատեսուող հանդիպում մը, սպասելով Թուրքիոյ պատասխանին:

Թուրք վարիչներ սակայն բուռն կերպով կը մերժեն նման առաջարկ: Արդարեւ, Թուրքիոյ խորհրդարանի տեղեկատուական սպասարկութեան պատասխանատուներէն՝ Ամրուլլահ Ասրա Չորեքշաբթի օր «Պի.Պի.Սի.» կայանին կատարած իր յայտարարութեամբ Թուրքիոյ այս կեցուածքը «հիմնաւորեց» երեք պատճառներով՝ նշելով, որ «Թուրքիա ներկայիս թիրախ դարձած է ահաբեկչական Քրտական աշխատաւորական կուսակցութեան (ՔԱԿ), ՏԱՀԵՇ-ի եւ երկրի ձախակողմեան կազմակերպութեանց կողմէ»: Ան նոյնպէս արդարացուց իր երկրին կեցուածքը խորհրդարանի կարգ մը երեսփոխաններու անձեռնմխելիութեան կարգավիճակի վերացման գծով: Ամրուլլահ Ասրա ի նպաստ ՔԱԿ-ի կողմնորոշուող որակեց ՄԱԿ-ի պատկան պատասխանատուն:

Նման կեցուածքով ելոյթ ունեցած էր նաեւ Թուրքիոյ Եւրոպական Միութեան հարցերու նախարար Վոլքան Պուզկըր՝ «անկարելի» նկատելով Թուրքիոյ կողմէ նշեալ 72 կէտերու բաւարարման քայլ մը: Ան շեշտեց, որ ահաբեկչութեան դիմակալման գծով իր երկրին որդեգրած ու կիրարկած քաղաքականութիւնը «լուսագոյնս կը համընկնի» Եւրոպական Միութեան առնչակից չափանիշներուն:

Նշենք, որ վերջին ամիսներուն զինեալ սաստիկ բախումներ տեղի կ'ունենան Թուրքիոյ զանազան շրջաններուն մէջ, թրքական սպահովական ուժերուն եւ Քրտական աշխատաւորական կուսակցութեան զինեալներուն, ինչպէս նաեւ ՏԱՀԵՇ-ի միջեւ: Թուրքիա բազմաթիւ քննադատութեանց կ'ենթարկուի ահաբեկչութեան դիմակալման պատճառաբանութեամբ իր կիրարկած բիրտ ու անմարդկային պատժամիջոցներուն համար: Այս գծով ՄԱԿ-ի պատկան պատասխանատուն իրեն հասած տեղեկություններուն հիման վրայ Թուրքիայէն պահանջած էր արտօնել ՄԱԿ-ի պատկան քննիչներուն հետաքննութիւն բանալու այս գծով:

ԱՆՂՆԱԴԱՐՁ

Կարգախօսը՝ «Արցախի Հետ»

Ապրիլեան քառօրեայ պատերազմին յաջորդող օրերուն, Արցախէն մինչեւ սփիւռքի հեռաւոր ափերը, հայրենասիրական ոգիի իւրօրինակ վերանորոգումի մը ականատեսը եղանք: Վերանորոգումն ալ հաւանաբար ճիշդ բնութագրումը չէ՛ այս մթնոլորտին. հայրենասէր եղած է մեր ժողովուրդը եւ ամէն փորձութիւն դիմագրաւած է գոհաբերութեան առասպելական դրսեւորումներով:



Հիմա՛ ալ հայրենասիրութիւնը կը ճառագայթէ մեր սահմաններուն հսկող հրաշալի տղոց հոգիէն, հայկական դիւցազներգութեան նոր ու առատ հում նիւթեր տրամադրող անոնց սխրագործութիւնները վկայ՝:

Հիմա՛ ալ հայրենասիրութիւնը կը պոռթկայ իրենց ապրուստը հազիւ հոգացող, ճակատագրական պահերուն ընկերային բողոքի զգացումները երկրորդական կարգի մղող Հայաստանի քաղաքացիներու աչքերէն. անոնք հազարներով ուղղուեցան սահման, գրաւեցին պաշտպանական դիրքեր եւ ամուր կանգնած կը մնան իրենց զաւակ, իրենց եղբայր, իրենց ընկեր բանակայիններուն կողքին:

Հիմա՛ ալ հայրենասիրութիւնը կը թեւածէ սփիւռքի տարածքին՝ արդէն Արցախ հասած երիտասարդ արիասիրտներ շարժելով, միւս կողմէ՝ անհատական եւ միութենական բազմատեսակ նախաձեռնութիւններով հանգանակութիւններու ծնունդ տալով:

«Արցախի հետ» կարգախօսը ուղեցոյց դարձուցած հայորդիներ ու հայկական կազմակերպութիւններ, իրենք իրենց վրայ վերցուցած են հայոց բանակի հօրացման առաքելութիւնը եւ դրամ ու անհրաժեշտ այլ իրեր հաւաքելով՝ ժամ առաջ դիրքերը պաշտպանողներուն իրենց հոգածութիւնը ապացուցելու տենդով կ'աշխատին:

Կ'ողջունենք այս համընդհանուր արշաւը, այս մթնոլորտը, այս ոգին եւ կը քաջալերենք մեր հայրենակիցները՝ իրենց բաժինը փոխանցելու բոլո՛ր վստահելի կառոյցներուն, բոլո՛ր հիմնադրամներուն:

Հայոց բանակին թիկունք չկանգնիլը այսօր հաստատապէ՛ս անհասկնալի ու անարդարանալի վարքագիծ է:

ԱԲՕ ՊՈՂԻԿԵԱՆ

WWW.AZTAGDAILY.COM

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

ՀՅԴ Մոնթեպելլոյի «Դրօ» Կոմիտեն 101,000 Տոլար Հանգանակեց Արցախի Ի Նպաստ

Շաբաթ, 7 Մայիսին, ՀՅԴ Մոնթեպելլոյի «Դրօ» կոմիտեին կազմակերպած յատուկ հանգանակային ձեռնարկին ընթացքին տիրող խանդավառ մթնոլորտին մեջ գոյացաւ 101,000 տոլար:

«Դրօ» կոմիտեն իր տարեկան հանգանակային այս ձեռնարկը նուիրած էր Արցախին. հանգանակուած ամբողջ գումարը պիտի յատկացուի Ապրիլի քառօրեայ պատերազմին ընթացքին Արցախի աւերուած շրջաններու վերականգնումին եւ նահատակուած զինուորներու ընտանիքներուն աջակցութեան նպատակին՝ «Արցախի հետ» կարգախօսով ձեռնարկուած հանգանակային ընդհանուր արշաւի ծիրին մեջ», յայտնեց ՀՅԴ «Դրօ» Կոմիտեի ներկայացուցիչ Սարգիս Նուրեան:

«Դրօ» կոմիտեն այս ձեռնարկին ընթացքին պատուեց իւրայատուկ հայորդի մը՝ Մայք Սարեանը, որ տարիներ շարունակ, լուռ ու անձայն, միլիոնաւոր տոլարի առողջապահական սարքեր ու դեղորայք նուիրած է Հայաստանին ու Արցախին:

Հայոց Գեղասպանութեան Նուիրուած Ձեռնարկներ



Ապրիլ 23-ին, Լոուրի քաղաքապետարանի շէնքի մուտքին աւելի քան հարիւր հայորդիներու ներկայութեամբ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 101-ամեակին նուիրուած ձեռնարկ՝ հովանաւորութեամբ Մերիմեք Վելիի Հայ դատի գրասենեակին եւ շրջանի Հայոց ցեղասպանութեան ձեռնարկներու կազմակերպիչ կոմիտեին:

Քաղաքապետ Էտ Քեննետի խօսք առնելով՝ յայտնեց, թէ Մերիմեք Վելիի հայերը տիպար եւ օրինակելի են,

աւելցնելով, որ անոնք պահեցին իրենց արմատները եւ շարունակ գործեցին ի նպաստ շրջանի բարգաւաճման: Ան նաեւ հաստատեց, թէ պիտի ծածանի հայկական եռագոյնը քաղաքապետարանի շէնքի մուտքին:

Օրուան հանդիսավար Միւրիլ Բարսեղեան իր խօսքին մեջ ըսաւ, թէ 101 տարի առաջ պատահեցաւ տեղահանութիւն եւ ցեղասպանութիւն եւ այսօր միեւնոյն ոճը կը շարունակուի Արցախի մեջ եւ նոյնիսկ գաղութն ներս՝ հակաքարոզչական պաստառներ զետեղելով եւ աղաւաղելով պատմութիւնը:

Միտըլսեքսի շերիֆ Փիթըր Գոյթուճեան յայտնեց, թէ հետեւողական ձեւով պէտք է շարունակել աշխատանքը՝ թրքական եւ ազրպէյճանական քարոզչական մեքենային դէմ:

Քաղաքապետարանի խորհրդատուներեն Ռիթա Մերսիե, իր կարգին խօսք անելով, արտայայտեց իր յուսախաբությունը, որ նախագահ Օպամա շարունակ կը մերժէ ընդունիլ, թէ պատահաճը ցեղասպանություն է: Ելոյթ ունեցան նաեւ Լուսիլ Պերպերեան՝ ՀԵԴ-ի անունով եւ Մոֆիա Մանուկեան՝ Սուրբ Վարդանանց եկեղեցւոյ Երիտասարդական մարմինին անունով, որոնք իրենց խօսքին մէջ յայտնեցին, թէ պիտի շարունակեն պայքարիլ վասն արդարութեան:

Ձեռնարկի աւարտին կատարուեցաւ աղօթք եւ պատարագ:

Իսկ Գերմանիոյ զանազան քաղաքներու մէջ տեղի ունեցան «Հայոց ցեղասպանութեան 101-տարելիցին նուիրուած զանազան ձեռնարկներ: 17 Ապրիլին, բարերարութեամբ Փոլ Կիւլօլլուի՝ Գերմանիոյ Ենա քաղաքի մէջ, 23 Ապրիլին բարերարութեամբ մոսկուաբնակ Արթուր Վարժապետեանի՝ Պերլինի մէջ, 29 Ապրիլին բարերարութեամբ Վահան Արսէնեանի՝ Քեիլ քաղաքի մէջ տեղի ունեցան խաչքարերու օծում՝ ձեռամբ Գերմանիոյ առաջնորդ Գարեգին արք. Պերճեանի, ներկայութեամբ Հայաստանի դեսպան Աշոտ Սմբատեանի:



24 Ապրիլին հարաւային Գերմանիոյ Կեօփփինկեն քաղաքի Սուրբ Խաչ եկեղեցւոյ առջեւ եւ Շթութկարթ քաղաքի հայկական գերեզմանատան մէջ նախապէս տեղադրուած խաչքարերու մօտ կատարուեցան արարողութիւններ:

Ոգեկոչման ձեռնարկներ տեղի ունեցան նաեւ Քեօլն, Նիւրենպերկ, Միւնիխ, Նոյվիկ, Պրօնշլըվայկ, Պրեմեն քաղաքներուն մէջ նախապէս տեղադրուած խաչքարերու առջեւ:



Նաեւ 24 Ապրիլին Փրովիտենսի մէջ «Նորտ Պրրիլլ Կրաունտ»-ի հայոց յուշարձանի մուտքին, մասնակցութեամբ տեղւոյն ՀՅԴ «Քրիստափոր» կոմիտէութեան, ՀՕՄ-ի «Արաքս» եւ «Անի» մասնաճիւղերուն, ՀՄԸՄ-ին եւ Համազգայինին՝ տեղի ունեցաւ ձեռնարկ:

Օրուան բանախօս Պարպարա Մերկերեան կոչ ուղղեց ներկաներուն տեղի չտալ քաղաքական բանգաւառէն ներս կատարուած հակահայ իրադարձութիւններուն դիմաց:

Խօսք առին նաեւ կառավարիչ Ճինա Ռայմունտօ, ծերակուտականներ՝ Ճեք Ռիտ եւ Շելտըն Ուայթհաուզ եւ քննկրեսականներ՝ Տէյվիտ Միսիլին եւ Ճէյմս Լանճըվին:

Այս առթիւ Փոլին Կեցոյեան եւ Եսթեր Գալայճեան յայտնեցին, թէ տարուան Ցեղասպանութեան ուսուցիչ ընտրուած է Քաթըրին Սաման, որուն մասնագիտութիւնն է դասաւանդել Հայոց ցեղասպանութիւնն ու Հրէական ողջակիզումը:

WWW.ARMEIANPRELACYKW.COM

Թեմի Առաջնորդի Այցելութիւնը Հանրապետութեան Նախագահին

Ընդառաջելով Ֆրանսայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս. Յովհաննէսեանի խնդրանքին՝ հանրապետութեան նախագահ Ֆրանսուա Հոլանտ 29 Ապրիլին Էլիզէի պալատին մէջ ընդունեց սրբազանը եւ անոր քաղաքական խորհրդական Արթիւր Խանճեանը:

Հանդիպումի ընթացքին առաջնորդ սրբազանը ներկայացուց ֆրանսահայ թեմի ստեղծման հանգամանքները, ինչպէս նաեւ՝ անոր դերը ամբողջ Արեւմտեան Եւրոպայի մէջ: Ան բացատրութիւններ տուաւ նաեւ 2014 դեկտեմբերին իր պաշտօնի ստանձնումէն ի վեր իրագործուած ծրագիրներուն մասին, ինչպէս նաեւ խօսեցաւ ապագայի ծրագիրներուն մասին:

Վահան եպս. Յովհաննէսեան ֆրանսահայ համայնքին անունով հանրապետութեան նախագահին յայտնեց Ցեղասպանութեան Ժխտումի պատժելիութեան օրէնքի որդեգրման գծով իր սպասումը:

Անդրադարձաւ նաեւ, Թուրքիոյ զօրակցութիւնը վայելող Ագրպէճանի կողմէ Ապրիլին Արցախի դէմ ձեռնարկուած յարձակման: Առաջնորդ սրբազանը հանրապետութեան ղեկավարին դիմաց նաեւ որպէս Մինսքի խումբի համանախագահողի, ինչպէս նաեւ՝ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի անդամ երկրի նախագահի, որպէսզի հրադադարը պարտադրուի Ագրպէճանին, եւ այդ երկիրը ճանչնայ պապենական հողերուն վրայ ապրելու Ղարաբաղի հայերուն իրաւունքը:

«Ինքնորոշուած Ղարաբաղին Աջակցութեան Հաւաքական»-ին Կազմակերպութեամբ՝ Հանրահաւաքներ

Կազմակերպութեամբ «Ինքնորոշուած Ղարաբաղին աջակցութեան հաւաքական»-ին 30 Ապրիլին, փարիզահայ գաղութի կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ նոյն օրուան մէջ երեք հանրահաւաք՝ Ագրպէճանին զէնք վաճառող գլխաւոր երեք պետութեանց ներկայացուցչութիւններուն առջեւ:

Արցախի վրայ ագրպէճանական Ապրիլեան յարձակումէն ետք ստեղծուած այս հաւաքականին մղիչ ուժը կը կազմեն «Հայկական վերածնունդ» սփիւռքեան կազմակերպութեան Փարիզի մասնաճիւղը, «Շարժում» երիտասարդական յառաջդիմական նորաստեղծ շարժումը եւ «Հարիւրներու խումբ»-ը:

Առաջին հանրահաւաքը տեղի ունեցաւ ժամը 1:30-ին, Ռուսիոյ դեսպանատան առջեւ, ուր պարզուած էին Ռուսիոյ դէմ զանազան լոզունգներ կրող պաստառներ: Պարզուած էին նաեւ Արցախի Հանրապետութեան դրօշը, կողքին՝ այն զէնքերուն նկարները, որոնք Ռուսիոյ կողմէ վաճառուած են Ագրպէճանին, ինչպէս նաեւ՝ նահատակ զինուորներուն նկարները:

Ելոյթ ունեցան հայերէնով՝ «Հայկական վերածնունդ»-ի բանբեր Շանթ Ոսկերիչեան, ֆրանսերէնով «Շարժում»-էն՝ Հայկ Սեւան, որոնք խստիւ դատապարտեցին Ռուսիոյ վարած քաղաքականութիւնը ընդդէմ Հայաստանի եւ կոչ ուղղեցին անյապաղ դադրեցնելու զէնքերու

առաքումը Ագրպեյճան, աւելցնելով, որ յառաջիկային գործուելիք մարդկութեան դէմ ոճիրներուն պատասխանատուութիւնը պիտի իյնայ Ռուսիոյ ուսերուն վրայ:

Երկրորդ հանրահաւաքը տեղի ունեցաւ ժամը 3:30-ին, Իսրայէլի դեսպանատան մօտ, ուր եւս պարգուած էին նոյնիմաստ պաստառներ՝ Իսրայէլի հասցէին: Ներկայացուած էին Իսրայէլի վաճառած զէնքերուն նկարները, որոնց կողքին պարգուած էին Հայաստանի եւ Արցախի դրօշները: Հոս եւս խօսք առին նոյն անձերը, որոնք շեշտեցին բարոյական այն ցած մակարդակը, ուր իջած է ցեղասպանութիւն ապրած ժողովուրդի մը պետութիւնը, որ գերադասելով նիւթականը եւ դրամը՝ ցեղասպանուած ուրիշ ժողովուրդ մը կրկին նոյն ճակատագրին ենթարկուելու սպառնալիքին դէմ յանդիման կը դնէ, եւ պահանջեցին, որ Իսրայէլ վերջ տայ այդ յանցաւոր եւ ապաքարոյ քաղաքականութեան:

Երրորդ եւ վերջին հանրահաւաքը տեղի ունեցաւ ժամը 5:30-ին, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան շէնքին դիմաց, նոյն պաստառներով՝ Ֆրանսայի հասցէին:

Խօսք առին «Շարժում»-ի հիմնադիրներէն Հայկ Սեւան եւ Եղիշէ Կորիզեան, որոնք խստօրէն դատապարտեցին Ֆրանսայի երկդիմի քաղաքականութիւնը, որ հակառակ Հայաստանի բարեկամ երկիր ըլլալուն՝ Ագրպեյճանին կը վաճառէ ռազմական նպատակներով օգտագործուող իրեր:

Ռուսիոյ եւ Իսրայէլի դեսպանատուները բացարձակօրէն մերժած ըլլալով ընդունիլ որեւէ պատուիրակութիւն կամ նամակ՝ անոնց ուղղուած նամակները դրկուեցան թղթատարով:

Ինչ կը վերաբերի Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան, Կովկասի բաժնի պետը արձակուրդի մեկնած ըլլալով, պատուիրակութիւն մը պիտի ընդունուի յառաջիկայ օրերուն:

«Շուշի» Պարախումբի Ելոյթը



Հայոց ցեղասպանութեան 101-ամեակին առիթով, 10 Ապրիլին, Կլենտէյլի երկրորդական վարժարանին մէջ ելոյթ ունեցաւ «Շուշի» պարախումբը՝ ղեկավարութեամբ Սեդա Փասքալեան-Քանթարճեանի, երաժշտական ղեկավար՝ Անդրանիկ Մուրատեան: Ձեռնարկը կը կրէր «Յիշէ՛ 1915-ը եւ ոտքի կանգէ՛» խորագիրը:

Պարախումբի 49 անդամները ներկայացուցին հայկական պարեր: Ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Հայաստանէն, Նիւ Եորքէն ու Լոս Անճելըսէն յայտնի երգիչներ, ինչպէս՝ Յասմիկ Մելիսենճեան, Անահիտ Զաքարեան, Սալբի Մայիլեան, Արմէն Յովհաննիսեան, Ռուբէն Թելունց, իսկ օրուան պատուոյ հիւրն էր հայրենի յայտի յորինող Արա Գեորգեան:

Արցախէն եւ Հայաստանէն նոր ժամանած երգիչներ Անտրէ եւ Լէյլա Սարիբեկեան իրենց ունեցած ելոյթներուն ընթացքին զօրակցութիւն յայտնեցին հայրենիքի սահմանները պաշտպանող հայ զինուորներուն:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Աբրահամ Լինքոլնի Նամակը՝ Ուղղուած Իր Տղուն Ուսուցչին

Աբրահամ Լինքոլնը Մ. Նահանգներու 16-րդ նախագահն էր: Լինքոլնը ազգային հերոս էր, անոր հետ կը կապուի ստրկատիրական համակարգի վերացումը եւ Մայիտակ տան մէջ միասնութեան եւ ազնուութեան մթնոլորտի հաստատումը:

Լինքոլն «Ամերիկեան երազանք»-ի մարմնացումն էր: Աղքատ ընտանիքի զաւակ՝ փոքր տարիքէն ծանր աշխատանքի լծուած էր ընտանիքին օգնելու համար:

Ընտանիքին նիւթական ծանր վիճակին պատճառով ան ընդամենը մէկ տարի դպրոց յաճախեց, սակայն շարունակեց ինքնուրոյն սորվիլ տառերը եւ գիրքեր կարդալ: Յամառութեամբ եւ աշխատասիրութեամբ շարունակեց ինքնագարգացումը եւ հասաւ աննախադէպ բարձունքներու եւ դարձաւ երկրի նախագահ:



Աբրահամ Լինքոլն ուներ չորս տղայ, որոնցմէ երեքը 4, 11 եւ 18 տարեկանին մահացան թոքախտէ եւ տիֆթերիայէ: Միայն աւագ որդին՝ Ռոպըրթը ապրեցաւ մինչեւ 82 տարեկան:

1855-ին Լինքոլն գրած է իր նշանաւոր նամակը՝ ուղղուած Ուիլիըմի ուսուցչիին: Ուիլիըմ 11 տարեկանին մեռաւ եւ չկրցաւ իրագործել իր պատգամները: Լինքոլն կը խօսի չափազանց կարեւոր բաներու մասին, իսկ մենք դժբախտաբար պէտք եղած կարեւորութիւնը, չենք տար անոնց: Ստորեւ նամակէն բաժիններ.

«... Ես կը հասկնամ, որ ան պէտք է իմանայ, որ բոլոր մարդիկ արդար չեն, բոլորը անկեղծ չեն: Բայց անոր սորվեցուցէք, որ իւրաքանչիւր սրիկայի կողքին կայ նաեւ հերոս, որ՝ իւրաքանչիւր եսասէր քաղաքական գործիչի դիմաց կը գտնուի նաեւ նուիրուած առաջնորդ:

«Անոր սորվեցուցէք, որ եթէ թշնամի կայ, նաեւ ընկեր կը գտնուի: Անոր սորվեցուցէք, որ շահած մէկ տոլարը շատ աւելի արժէքաւոր է, քան՝ գտած հինգը:

«Անոր սորվեցուցէք ընդունիլ պարտութիւնը, ինչպէս նաեւ՝ վայելել յաղթանակները: Եթէ կրնաք, զինք հեռու պահեցէք նախանձէն: Օգնեցէք անոր, որ մեծամիտներուն եւ գոռոզներուն յաղթելը ամենադիւրին գործն է: Եթէ կրնաք, սորվեցուցէք անոր հետաքրքրուիլ գիրքերով:

«Անոր ազատ ժամանակ տուէք, որպէսզի կարենայ մտածել յաւերժ գաղտնիքներուն՝ երկինքի թռչուններուն, արեւի շողերուն մէջ թռչող մեղուններուն եւ բլուրներուն կանաչ լանջերուն ծաղկող ծաղիկներուն մասին:

«Անոր սորվեցուցեք, որ դպրոցին մեջ անյաջողութիւն կրելը շատ անելի պատուաբեր է, քան՝ խարդախութեան դիմելը: Անոր սորվեցուցեք վստահիլ իր սեփական միտքերուն, եթէ նոյնիսկ մէկը իրեն ըսէ, թէ կը սխալի: Անոր սորվեցուցեք մեղմ վարուիլ մեղմ մարդոց հետ եւ դաժան՝ դաժաններու հետ:

«Փորձեցեք տղուս ուժ տալ, որպէսզի ան չհետեւի ամբոխին: Սորվեցուցեք անոր, որ լացը ամօթ չէ: Եթէ կրնաք, նաեւ սորվեցուցեք ծիծաղիլ տխրութեան մէջ:

Սորվեցուցեք անոր, իր ուղեղն ու մկաններուն ուժը վաճառել ամենաբարձր գինով, բայց երբեք վաճառքի չհանել ո՛չ սիրտը, ո՛չ ալ հոգին:

«Անոր հետ մեղմ վարուեցեք, բայց՝ առանց անելորդ քնքշութեան, որովհետեւ միայն կրակի մէջէն անցնելու փորձութենէն ետք կը բացայայտուին պողպատի լաւագոյն յատկանիշները:

«Թոյլ տուէք անոր քաջ ըլլալ, որպէսզի ան դառնայ անհանդուրժող վատ բաներու հանդէպ: Թոյլ տուէք, որ ան համբերատար ըլլայ, որպէսզի դառնայ խիզախ:

«Սորվեցուցեք անոր հաւատալ ինքն իրեն, որովհետեւ այդ պարագային ան միշտ հաւատք կ'ունենայ մարդկութեան հանդէպ:

«Ասիկա դիրին գործ չէ, բայց տեսեք, թէ ինչ ի՛նչ կրնաք ընել... Իմ տղաս այնքան լաւ տղայ է»:

ԿՆՈՋԱԿԱՆ

Մեղմ Կրակի Վրայ Եփել

Ինչո՞ւ մեղմ կրակի վրայ եփել ճաշը:

Ըստ սննդականոնի մասնագէտներու եւ անոնց հաստատումով, մեղմ կրակի վրայ, դանդաղ կերպով եւ փակ կաթսայի մը մէջ ճաշը եփելը ունի իր բարենպաստ կողմերը:

– Կ'արտօնէ սննդականօրէն հաւասարակշռուած եւ նիւթականապէս համեմատաբար նուազ արժէքով ուտելիքներ պատրաստել:

– Թոյլ կու տայ մսեղէնի եւ ձկնեղէնի զանազան ճաշատեսակներ պատրաստել՝ բանջարեղէնի եւ համեմունքի տարբեր տեսակներ անելցնելով:

– Կը պահպանէ ճաշին մէջ գտնուող հանքային աղերը, որովհետեւ ուտելիքէն առաջացած հիւթը կարելի է օգտագործել իբրեւ թացան:

– Կը փափկացնէ բոյսերուն մէջ գտնուող բնաթելերը, եւ որ կը դիրացնէ մարսողութիւնը:



Եփելու այս ձևը ունի նաև իր անպատեհությունները: Քանի որ ճաշը կ'եփի դանդաղ ձևով եւ երկար ժամանակի տեւողութեամբ ուտելիքին մէջ, մասնաւորաբար մսեղէններուն մէջ գտնուող կենսասնիթեր Պէ1-ի եւ Պէ12-ի բաղադրիչ մասերէն բաժին մը կը ջնջուի, իսկ կենսասնիթ

Մէ-ն ամբողջութեամբ կը վերանայ:

Երեք ճաշատեսակներ, որոնք կարելի է վերոնշեալ ձևով պատրաստել.

1- Մեւ գոյնի «Կարօ» ձուկի տեսակը

Իրաքանչիւր 100 կրամը կը պարունակէ 76

քիլոքալորի, 18 կրամ փրոթէին եւ 0,4 կրամ ճարպ:



Ձուկի այս տեսակը հարուստ է փրոթէինով եւ աղքատ՝ ճարպով: Անիկա կուշտ կը պահէ ենթական: Կը պարունակէ փոթասիում, մակնիզիում եւ զանազան կենսասնիթեր: Կարելի է պատրաստել անոր վրայ աւելցնելով՝ բանջարեղէնի տեսակներ եւ իբրեւ համեմունք օգտատործել ճերմակ քացախը:

2- Սոյա Բոյսը

Իրաքանչիւր 100 կրամը կը պարունակէ 30 քիլոքալորի, 3 կրամ փրոթէին, 0,2 կրամ ճարպ եւ 4 կրամ շաքարի տեսակներ: Պէտք է նշել, որ սոյա բոյսը յառաջ կու գայ «Մոնկօ» լուբիայի սերմանումով եւ ոչ մէկ կապ ունի բոլորին ծանօթ սոյային հետ: Սոյա բոյսը աղքատ է փրոթէինով եւ ճարպով, սակայն կը պարունակէ 90 առ հարիւր ջուր: Կարելի է զայն ներկայացնել իբրեւ աղցան, կամ տապակին մէջ թէթել մը կարմրցնելով՝ զետեղել ձուկի կամ միսի կողքին: Կարելի է նաև «թայ» թացանը օգտագործելով՝ սոյան սպառել քարիտեզին հետ, ինչպէս նաև կարելի է զայն օգտագործել ապուրին մէջ:

3- Հաւկիթը

Իրաքանչիւր 100 կրամը կը պարունակէ 142 քիլոքալորի, 12,6 կրամ փրոթէին, 9,86 կրամ ճարպ եւ 0,89 կրամ շաքարի տեսակներ:

Հաւկիթը ուժի աղբիւր է: Անիկա հարուստ է փրոթէինով, ինչպէս նաև՝ ամինօ ասիտով, որ անհրաժեշտ է մարմնին համար: Ան նաև գլխաւոր աղբիւրը կը նկատուի քոլինի, որ նիւթ մըն է, որ կ'արգիլէ քոլեսթերոլին երակները խցանել, ինչպէս նաև մեծ դերակատարութիւն ունի ուղեղի առնչութեամբ: Հաւկիթը կը պարունակէ նաև զանազան կենսասնիթեր եւ հանքային աղեր: Հետեւաբար հաւկիթը ամբողջութեամբ սնունդ է: Հաւկիթով ճաշ կարելի է պատրաստել զայն զետեղելով թէթել կրակի վրայ եւ անոր վրայ աւելցնելով բարակ շերտերով հնդկահաւու միս, կանաչ անուշ պղպեղ, լոլիկ եւ սոխ: Այս կարելի է նկատել կենսասնիթերով եւ փրոթէինով հարուստ ամբողջական սնունդ՝ իբրեւ ընթրիք:

ՔԱՐԼԱ ԵԱՐՏՆՄԵԱՆ

WWW.AZTARAR.COM